ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ ՀԱՅԿ ԱՐՍԵՆԻ

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՁԵՎԻ ԱՐԴԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ԺԲ.00.01 – «Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ - 2018

ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ

АРУТЮНЯН АЙК АРСЕНОВИЧ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

АВТОРЕФЕРАТ

диссертации на соискание ученой степени кандидата юридических наук по специальности 12.00.01 – “Теория и история права и государства; история учений о праве и государстве”

ЕРЕВАН - 2018

Ատենախոսության թեման հաստատվել է
Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Գ. Վաղարշյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝ իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Հ. Մ. Ստեփանյան

իրավաբանական գիտությունների թեկնածու, Ն. Ա. Գաբրիելյան

Առաջատար կազմակերպություն՝ ՀՀ պետական կառավարման ակադեմիա

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2018 թվականի հուլիսի 11-ին, ժամը 11^{00}-ին ՀՀ ԲՈՀ-ի՝ Երևանի պետական համալսարանում գործող իրավագիտության 001 մասնագիտական խորհրդի նիստում (Երևան – 0025, Ալեք Մանուկյան 1):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի գրադարանի գիտաշխատողների ընթերցասրահում:

Սեղմագիրն առաքվել է 2018 թվականի հունիսի 11-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար՝ իրավ. գիտ. թեկ., դոցենտ Ա. Ա. Մանասյան

Тема диссертации утверждена в
Ереванском государственном университете

Научный руководитель: доктор юридических наук, профессор А. Г. Вагаршян

Официальные оппоненты: доктор юридических наук, профессор О. М. Степанян

кандидат юридических наук Н. А. Габриелян

Ведущая организация: Академия государственного управления РА

Защита диссертации состоится 11-ого июля 2018 г. в 11^{00} часов на заседании Специализированного совета ВАК РА 001 по юриспруденции при Ереванском государственном университете (Ереван - 0025, Алека Манукяна 1).

С диссертацией можно ознакомиться в читальном зале научных работников библиотеки Ереванского государственного университета.

Автореферат разослан 11-ого июля 2018 года.

Ученый секретарь специализированного совета: кандидат юридических наук, доцент А. А. Манасян

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Ատենախոսության թեմայի արդիականությունը: Ազգային անվտանգության խնդիրների նկատմամբ համաշխարհային հանրության հետաքրքրությունը գնալով աճում է կապված 20-րդ դարի վերջի և 21-րդ դարի սկզբի տևական ճգնաժամային երևույթների հետ, որոնք ուղղակիորեն հարցականի տակ են դրել ամբողջ մարդկության հետագա ճակատագիրը: Համաշխարհային աշխարհաքաղաքական իրադրության դինամիկ փոփոխությունները, Հայաստանի Հանրապետության աշխարհաքաղաքական կացությունը և նրա ներքին զարգազման պայմանները՝ սոցիալ-տնտեսական զարգացման բացասական միտումները, քաղաքացիների, հասարակության և պետության շահերին սպառնացող նոր վտանգները պետական իշխանության մարմինների առջև խնդիր են դրել ձևավորելու պետական իշխանության կազմակերպման և գործառութավորման այնպիսի մոդել, որն ունակ կլինի լուծելու ազգային անվտանգության ապահովան գերակա խնդիրները: Այս համատեքստում ատենախոսության արդիականությունը պայմանավորված է մի խումբ պայմանների համակցությամբ:

Առաջին հերթին ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրը, հանդիսանալով պետական և հասարակական կյանքի բոլոր ոլորտներում անցկացվող բարեփոխումների ինչպես պայմանը, այնպես էլ նպատակը, Հայաստանի Հանրապետության համար շարունակում է մնալ հիմնաքարային: Քննարկվող ոլորտում իրականացվող փոփոխությունների բովանադկությունը պետք է միտված լինի Հայաստանի Հանրապետության ինքնիշխանության, տարածքային ամբողջականության, անվտանգ և կայուն զարգացման ապահովմանն ու համակողմանի ամրապնդմանը:

Բացի այդ աշխարհում ձևավորվող իրավիճակը բնորոշվում է «լարվածության կենտրոնների» առկայությամբ, տարատեսակ միջազգային կոալիցիաների և առանձին գերտերությունների ձգտումներով այլ պետությունների հաշվին սեփական աշխարհաքաղաքական ծրագրերն իրագործելու, շատ պետությունների դեռևս չլուծված սոցիալական խնդիրներով: Նշված արտաքին, ինչպես նաև ներքին մի շարք իրողությունները, Արցախի հիմնախնդրի առկայությունը՝ Հայաստանի Հանրապետությունում առավել հրատապ են դարձրել ազգային անվտանգության ապահովման հիմնախնդիրները: Այս տեսանկյունից էական հետաքրքրություն է ներկայացնում ազգային անվտանգության իրավական ապահովման՝ որպես Հայաստանում անձի, հասարակության և պետության անվտանգության ապահովման հիմնասյուներից մեկի համակարգային ուսումնասիրությունը:

Ատենախոսության թեմայի կտրվածքով նշված ոլորտի համեմատական-իրավական ուսումնասիրությունը հայրենական և միջազգային փորձի հիման վրա թույլ կտա գնահատել Հայաստանում ազգային անվտանգության իրավական ապահովման կայացման և հետագա կատարելագործման միտումները: Ազգային անվտագության իրավական ապահովման հիմնախնդիրը Հայաստանի Հանրապետությունում պայմանավորված է նաև այն իրողությամբ, որ հայ ժողովրդի առջև 1991 թվականի անկախացումից հետո ծառացած է հայկական պետականության լեգիտիմացման խնդիրը, որին էլ թերևս մեծապես ուղղված են եղել 2005 և 2015 թվականների սահմանադրական բարեփոխումները: Այս առումով որոշակի գիտական հետաքրքրություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ձևերի տեսական ուսումնասիրությունը, ազգային անվտանգության ապահովման տեսնակյունից դրանց հիմնախնդիրների ուսումնասիրությունը և կառավարման ձևով պայմանավորված ազգային անվտանգության սպառնալիքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների ձևակերպումը:

Այն իրողությունը, որ կառավարման ձևը և դրանում ներկառուցված քաղաքական-իրավական լուծումները էական կապ ունեն ազգային անվտանգության հետ, հաստատեց նաև մեր օրերի թավշյա հեղափոխությունը, էլ ավելի արդիական դարձնելով սույն հետազոտությունը, որը կարող է որոշակի առումով նպաստել ազգային անվտանգության՝ պետական կառավարման ձևով պայմանավորված վտանգների չեզոքացմանն ուղղված միջոցների բացահայտմանը՝ հայրենական և միջազգային փորձի հաշվառմամբ:

Հետազոտության թեմայի մշակվածության աստիճանը: Ազգային անվտանգության համատեքստում պետական կառավարման ձևի հիմնախնդիրներին նվիրված համալիր հետազոտություններ գրեթե չկան: Եղածները քննարկվող հարցերին անդրադառնում են հատվածականորեն՝ առանց ամբողջական և համակարգային գիտատեսական վերլուծության և համարժեք եզրահանգումների: Պետական կառավարման ձևի հիմնախն-դիրներն իրենց արտացոլումն են գտել մի շարք տեսաբան-գիտնականների գիտական աշխատություններում: Հետազոտման առարկայի որոշ հարցերով տեսական ներդրում ունեն հատկապես Ա. Վաղարշյանի, Գ. Հարությունյանի, Վ. Պողոսյանի, Գ. Դանիելյանի, Վ. Ներսեսյանցի, Ա. Սեդրակյանի, Ի. Գլեբովի, Վ. Մամառնովի, Վ. Սաֆոնովի, Մ. Դյուվերժեի, Ս. Ստեպաշինի, Վ. Չիրկինի, Ի. Գելիևայի, Վ. Կոլոկոլցևի, Ռ. Իդրիսովի և այլոց աշխատությունները:

Հարկ է նաև նկատել, որ հայրենական իրավական գրականության շրջանակներում ազգային անվտանգության համատեքստում պետական

կառավարման ձևի հիմնախնդիրները (հատկապես 2015 թ. սահմանադրական փոփոխությունների համատեքստում) դեռևս լիարժեք ուսումնասիրված չեն և դրանց վերաբերյալ համալիր գիտական հետազոտությունները բացակայում են: Ասվածը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ 2015 թ. փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ անցում է կատարվել կառավարման կիսանախագահական համակարգից դեպի խորհրդարանական կառավարման համակարգի, ինչի արդյունքում անհրաժեշտություն է առաջացել նորովի հետազոտել սահմանադրական մակարդակում գոյություն ունեցած, ինչպես նաև նոր ամրագրված՝ պետական բարձրագույն իշխանության կազմակերպման և գործառութավորման վերաբերյալ հարցերը՝ արժևորելով դրանց նշանակությունը ազգային անվտանգության ապահովման համատեսքտում, ինչպես նաև հայեցակարգային, ինստիտուցիոնալ, կառուցակարգային նոր մոտեցումներ և լուծումներ առաջադրել:

Հետազոտության օբյեկտը և առարկան: Հետազոտության օբյեկտն ազգային անվտանգության համատեքստում պետական կառավարման ձևի տեսական, սահմանադրական, ինչպես նաև օրենսդրական հիմքերն ու կառուցակարգերն են: Հետազոտության առարկան են հանդիսանում ազգային անվտանգության հասկացությունը, տարրերը, ազգային անվտանգության ռազմավարության՝ որպես ոլորտում պետական քաղաքականության հիմքը կազմող փաստաթղթի, դրա հիմնարար արժեքների, գործոնների և իրավական հիմքերի համալիր ուսումասիրությունը, պետական կառավարման ձևի և պետաիրավական ռեժիմի հարաբերակցությունը, ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիան ազգային անվտանգության համատեքստում, Երրորդ հանրապետության պետական կառավարման ձևերի վտանգները, ՀՀ սահմանադրական բարեփոխումները՝ որպես այդ վտանգների չեզոքացմանն ուղղված միջոցառումներ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության հիմնական նպատակն է ազգային անվտանգության համատեքստում պետական կառավարման ձևի ու դրանով պայմանավորված մի շարք պետաիրավական ինստիտուտների արդյունավետ գործառութավորման տեսական և գործնական հիմնախնդիրների համակողմանի վերհանումը, օբյեկտիվ գնահատումը և համալիր վերլուծությունը, ինչպես նաև ազգային անվտանգության ապահովման գործում պետական կառավարման ձևի դերի բացահայտումը և դրա հետագա կատարելագործմանն ուղղված հայեցակարգային եզրահանգումների, ինչպես նաև գիտագործնական բնույթի առաջարկների ներկայացումը:

Նշված նպատակի իրագործման համատեքստում առաջադրվել են հետևյալ հիմնական հետազոտական խնդիրները.

– պարզաբանել «ազգային անվտանգություն», «պետական անվտանգություն» եզրույթների բովանդակային ծավալը և հարաբերակցությունը՝ սահմանելով վերջիններիս տեսական բնորոշումները,

– ուսումնասիրել պետական կառավարմանն ձևը՝ որպես ֆենոմեն, ազգային անվտանգության համատեքստում,

– վեր հանել պետական կառավարման ձևի և պետաիրավական ռեժիմի էությունը և փոխհարաբերակցությունը,

– ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիոն զարգացման ուսումնասիրության համատեքստում բացահայտել ՀՀ պետական կառավարման ձևերի վտանգները,

– քննարկել ՀՀ սահմանադրական բարեփոխումները՝ որպես կառավարման ձևի անվտանգության իրավական ապահովման արդյունավետության բարձրացման միջոց,

– գնահատել ՀՀ սահմանադրական բարեփոխումների նշանակությունը ազգային անվտանգության իրավական ապահովման համատեքստում,

– վեր հանել և ուսումնասիրել պետական իշխանության կազմակերպման և գործառութավորման արդյունավետ համակարգ ձևավորելու գործընթացին խոչընդոտող իրավական գործոնները՝ մշակելով և առաջադրելով անվտանգ պետական կառավարման գործիքակազմ:

Հետազոտության տեսական հիմքը: Հետազոտության աղբյուրներ են ազգային անվտանգության իրավական ապահովման և պետական կառավարման ձևի հիմնախնդիրների բացահայտմանը և վերլուծությանը նվիրված հայրենական և արտասահմանյան հեղինակների աշխատությունները, հետազոտության օբյեկտին և առարկային առնչվող մասնագիտական գրականությունը՝ ատենախոսությունները, սեղմագրերը, մենագրությունները, գիտական հոդվածները և էլեկտրոնային հրապարակումները: Դրանց շարքում, հատկապես, կարելի է առանձնացնել Ա. Վաղարշյանի, Գ. Հարությունյանի, Վ. Պողոսյանի, Գ. Դանիելյանի, Վ. Ներսեսյանցի, Ա. Սեդրակյանի, Ի. Գլեբովի, Վ. Մամառնովի, Վ.Սաֆոնովի, Մ. Դյուվերժեի, Ս. Ստեպաշինի, Վ. Չիրկինի, Ի. Գելիևայի, Վ. Կոլոկոլցևի, Ռ. Իդրիսովի, Վ. Սաֆոնովի, Ա. Պերշինի, Ա. Վենգերովի, Օ. Բելկովի, Մ. Բագլայի, Ա. Ավակյանի և այլ գիտնականների՝ սույն հետազոտության օբյեկտին ու առարկային վերաբերելի գիտական դիրքորոշումները:

Հետազոտության իրավական և փորձառական հիմքերը: Հետազոտության ընթացքում ուսումնասիրվել ու վերլուծվել են Հայաստանի Հանրապետության և արտասահմանյան բազմաթիվ երկրների՝ պետական իշխանության կազմակերպմանն ու գործառութավորմանն առնչվող նորմատիվ ի-

րավական ակտերը: Բացի այդ, հետազոտվել են թեմայի առանձին առումներին վերաբերող մարմինների, այդ թվում՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի որոշումները, ՀՀ Սահմանադրական դատարանի ակտերը, Եվրախորհրդի «Ժողովրդավարություն՝ իրավունքի միջոցով» եվրոպական հանձնաժողովի (Վենետիկի հանձնաժողով) որոշ զեկույցներ և այլն:

Հետազոտության մեթոդաբանական հիմքը: Պայմանավորված հետազոտության նպատակներով և խնդիրներով՝ կիրառվել են համընդհանուր կամ համափիլիսոփայական (դիալեկտիկա), համագիտական (անալիզ, սինթեզ, ինդուկցիա, դեդուկցիա), մասնակի (վիճակագրական վերլուծության) մեթոդները, գիտական ճանաչողության պատմականության, օբյեկտիվության, բազմակողմանիության, համալիրության սկզբունքները: Բացի այդ, օգտագործվել են իրավագիտության հատուկ մեթոդները (ձևական-տրամաբանական, համեմատական-իրավական, իրավական մոդելավորման):

Հետազոտության գիտական նորույթը: Ատենախոսությունը տեսական հետազոտության եզակի փորձերից է՝ նվիրված հիմնախնդրի համակարգային վերլուծությանը՝ հաշվի առնելով սահմանադրական զարգացումների նոր միտումները: Աշխատանքում փորձ է արվել հստակեցնել ու սահմանել «ազգային անվտանգություն», «պետական անվտանգություն» հասկացությունները: Կատարվել է ազգային անվտանգության համատեքստում պետական կառավարման ձևի չհետազոտված կամ ոչ բավարար չափով գիտական իմաստավորման ենթարկված հիմնախնդիրների համալիր և համակողմանի ուսումնասիրություն, որի արդյունքում գիտական ընդհանրացման հիման վրա առաջադրվել են նոր մոտեցումներ:

Սույն ատենախոսության գիտական նորույթը, ի թիվս այլնի, պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ հայրենական իրավագիտության մեջ 2015 թվականի սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո առաջին անգամ բազմակողմանի դիտարկվել են պետական կառավարման ձևի հիմնախնդիրներն ազգային անվտանգության համատեքստում, կատարվել են համարժեք եզրահանգումներ և առաջադրվել են հայեցակարգային նոր մոտեցումներ:

Ատենախոսության գիտական նորույթն արտացոլված է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթներում և ատենախոսության եզրակացության մեջ կատարված տեսական ընդհանրացումներում:

Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

1. «Ազգային անվտանգություն» ասելով պետք է հասկանալ արտաքին և ներքին վտանգներից անձի, հասարակության և պետության կենսական կարևորագույն շահերի պաշտպանվածության վիճակը: Ընդ որում՝ կենսական կարևորագույն շահերի տակ պետք է հասկանալ

պահանջմունքների համակցություն, որոնց բավարարումն ապահովում է անձի, հասարակության և պետության գոյությունը և առաջընթաց զարգացումը:

Անձի շահերը ներառում են սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացումը, անձնական անվտանգության ապահովումը, կյանքի որակի և մակարդակի բարձրացումը, անձի և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացումը: Հասարակության շահերը հանգում են ժողովրդավարության ամրապնդմանը, իրավական, սոցիալական պետության կայացմանը և հասարակական համերաշխության պահպանությանը: Ժամանակակից իրավական պետության շահերը ելնում են սահմանադրական կարգի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անձեռնմխելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման, օրինականության անվերապահ ամրապնդման և իրավակարգի պահպանման, իշխանության լեգիտիմու-թյան ապահովման, փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման պահանջներից:

2. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն առերևույթ զուրկ չէ նաև որոշակի թերություններից, որոնք, ըստ էության, հանգում են հետևյալին. ա) ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը որոշակի առումով խիստ հռչակագրային բնույթ ունի, այդ իսկ պատճառով դրա դրույթները շատ դեպքերում անորոշ և դժվար իրագործելի են, բ) ռազմավարությունը չի ապահովում ոլորտի հասկացությունների սահմանումը, այլ շատ դեպքերում սահմանափակվում է զուտ թվարկումներով: Այսպես, օրինակ, ռազմավարությունը թվարկում է ազգային անվտանգության հիմնարար արժեքները, ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները՝ չտալով այդ հասկացությունների սահմանումները, գ) ռազմավարությունը չի սահմանում ազգային անվտանգության ապահովման համակարգը, խնդրո առարկա ոլորտում պետական կառավարման մարմինների փոխադարձ կապը, հիմնական խնդիրները և գործառույթները: Նշված թերությունները, սակայն, չեն նսեմացնում ռազմավարության դերն ու նշանակությունը ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետական միասնական քաղաքականության մշակման և իրագործման հարցում:

3. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունն անտեսել է պետության բովանդակային կողմի (պետահիրավական ռեժիմի) վրա կառավարման ձևի ազդեցության արդյունքում ազգային անվտանգության սպառնալիքների առաջացման օբյեկտիվ հնարավորությունը և չի նախատեսել գործուն կառուցակարգեր դա կանխելու համար:

Ռազմավարության հիմնարար արժեքների, դրանք ապահովող գործոնների և գործողությունների բովանդակային ուսումնասիրությունը և դրանց համադրումը պետահիրավական ռեժիմի՝ հետազոտության շրջանակներում քննարկված հատկանիշների հետ հիմք է տալիս եզրակացնելու, որ ռազմավարությունը սահմանափակվել է միայն ժողովրդավարական պետահիրավական ռեժիմի հաստատման համար անհրաժեշտ գործոնների ապահովմամբ՝ անտեսելով կառավարման ձևի հիմնախնդիրը: Կառավարման ձևի և պետության անվտանգության հարաբերակցության համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ կառավարման մենիշխանական, անձնիշխանական, նախագահական կամ կիսանախագահական համակարգի պայմաններում «փափուկ ուժի» գործոնը կարող է իշխանության բերել մի գործչի, որի քաղաքական հենարաններն ավելի շատ արտաքին ազդակներն են, քան ներքին: Դա պայմանավորված է Հայաստանի աշխարհաքաղաքական առանձնահատկություններով, ինչպես նաև ընտրական գործընթացներում նկատվող մի շարք բացասական երևույթներով ու միտումներով: Այս պայմաններում պետության կառավարման համակարգի փոփոխությունը՝ անցումը կիսանախագահական մենիշխանությունից խորհրդարանական համակարգին, պետք է դիտվի որպես պետության պաշտպանության և անվտանգության, ազգային շահերի իրացման ապահովման միջոց:

4. Հավասարապես անընդունելի են ինչպես պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների անտեսումը, այնպես էլ դրա բացարձակացումը: Կառավարման ձևով պայմանավորված վտանգների գիտակցումը ոչ թե այս կամ այն կառավարման ձևը որպես բացարձակ արժեք հռչակելն է, այլ կառավարման ընտրված ձևի՝ որոշակի պայմաններում վտանգներ առաջացնելու ունակության գիտակցումը և արդյունավետ իրավական կարգավորման միջոցով դրա չեզոքացումը: Պետության կառավարման ձևը քարացած չէ, այլ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ենթակա է փոփոխության և, ըստ էության, բնապատմական գործընթաց է: Իշխանության կազմակերպման կառուցվածքի պրոբլեմը հարաբերական խնդիր է, սակայն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմները բացարձակ են: Իշխանության կազմակերպվածքը կարող է լինել ամենատարբեր ձևերի: Սակայն գլխավորը դա չէ, այլ պետության առջև կանգնած կենսական կարևորությամբ խնդիրների, մասնավորապես՝ ազգային անվտանգության արդյունավետ լուծումն է, դրանով իսկ իշխանության գոյության իմաստի, նրա իրավահեղինակության ապահովումը:

5. ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված պետական

կառավարման կիսանախագահական ձևի սահմանադրահիրավական կարգավորման առանձնահատկություններն անխուսափելիորեն ստեղծել էին այն իրավիճակը, որ ամբողջ պետական համակարգը կառուցվում էր մեկ անձի՝ Հանրապետության Նախագահի շուրջ և կամքով: Ազգային անվտանգության տեսանկյունից այդպիսի իրավիճակը բացարձակապես անընդունելի է, քանի որ ազգային անվտանգության՝ որպես նպատակի տեսանկյունից անձ-հասարակություն-պետություն եռամիասնության մեջ գերական անձն է՝ իր կենսական կարևորության շահերով, մինչդեռ 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևը գործուն հիմքեր էր ստեղծել ներքին կազմակերպական իմունիտետից զուրկ պետական կառավարման համակարգը նեղ եսասիրական շահերին (անձնական, խմբակային և այլն) ծառայեցնելու և սեփական ինքնակամությանը ենթարկելու համար:

6. 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևն իր գործառութավորմամբ ազգային անվտանգության տեսանկյունից առաջ էր բերել այնպիսի իրողություն, որում իշխանության թևերի համակարգային փոխգործակցության ընթացիկ համակարգը դարձել էր ոչ արդյունավետ, իսկ պետական կառավարման համակարգը չէր ապահովում հասարակության և պետության կայուն զարգացումը: Նշված վտանգների հաղթահարման ամենաօպտիմալ ուղին Սահմանադրական բարեփոխումներն էին, որոնց ներկայացվող պահանջները, սկզբունքները և հայեցակարգային մոտեցումներն ամրագրվեցին ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում: Հարկ է նկատել, որ Հայեցակարգը հիմնականում համապատասխանում էր քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ժամանակակից ընկալումներին: Հայեցակարգով նաև ընդգծում է ազգային անվտանգության ապահովման և բարեփոխումների առանցքային նպատակի միջև սերտ կապը, մասնավորապես, կատարելագործել «իրավունքների... երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը» (անհատի շահերի պաշտպանություն), «բարձրացնել հանրային կառավարման արդյունավետությունը» (հասարակության շահերի պաշտպանություն) և ապահովել «իշխանությունների լիարժեք հավասարակշռում» (պետության շահերի պաշտպանություն): Նշված նպատակների կենսագործումը հասարակական կյանքում ժամանակակից հայկական պետականության առանցքային գործառույթն է, քանի որ ձեռնարկված բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումը անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:

7. Իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և

հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկված սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2015 թվականի Սահմանադրությամբ ամրագրված կառավարման խորհրդարանական ձևի լիակատար գործառութավորման առաջին իսկ օրերին, հակառակ բոլոր սպասելիքների, 2018 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում բարձրացավ ժողովրդական դժգոհության աննախադեպ ալիք, որի արդյունքում խորհրդարանական կառավարման ձևի Հայաստանի առաջին վարչապետն իր պաշտոնավարման վեցերորդ օրը հրաժարական ներկայացրեց: Իհարկե, երկրում առաջացած ճգնաժամը մեծապես կապված էր ոչ թե կառավարման խորհրդարանական, այլև նախկին՝ կիսանախագահական ձևի սույն հետազոտության շրջանակներում քննարկված թերություններով: Սակայն անվիճելի է թվում այն փաստը, որ ընդհանրապես բարեփոխումները, և, մասնավորապես, կառավարման ձևի փոփոխությունը դեռևս չեն ապահովել պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմի լուծումը, հետևապես հայկական պետականության բոլոր ջանքերը պետք է կենտրոնանան ընտրական համակարգի կատարելագործմանը և ընտրությունների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Հետազոտության տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության գիտատեսական նշանակությունն արտահայտվում է նրանում, որ հետազոտության շրջանակներում առաջին անգամ փորձ է արվել համակողմանի ուսումնասիրել պետական կառավարման ձևի և դրա ներհամակարգային ինստիտուտների հիմնախնդիրներն ազգային անվտանգության համատեքստում: Հետազոտությունն իրականացվել է նաև 2015 թ. սահմանադրական փոփոխությունների լույսի ներքո և վեր են հանվել տարբեր իրավակարգավորումների կատարելագործման ուղղություններ, ներկայացվել են գիտատեսական և գիտագործնական բնույթի հայեցակարգային նոր մոտեցումներ:

Ատենախոսության գործնական նշանակությունը կայանում է նրանում, որ վերջինիս արդյունքներն օգտակար են հետագա գիտական հետազոտությունների և այն դասընթացների համար, որոնց առարկան որևէ կերպ առնչվում է պետական կառավարման ձևի և/կամ ազգային անվտանգության իրավական ապահովման հիմնահարցերին: Հետազոտության թեմայի շրջանակներում կատարված վերլուծությունները, ներկայացված առաջարկություններն ու դրանց հիմնավորումները կարող են օգտագործվել նաև իրավաստեղծ, ինչպես նաև իրավակիրառ գործունեության ընթացքում՝ նպատակ ունենալով բարձրացնել իրավական կարգավորման արդյունավետության մակարդակը:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը

պատրաստվել է ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Հետազոտության արդյունքներն արտացոլվել են տպագրված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ատենախոսությունների հիմնական արդյունքների և դրույթների հրատարակման համար ընդունելի պարբերականներում: Դրանք նաև ներկայացվել են տարբեր գիտաժողովների շրջանակներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլուխներից, դրանցում ընդգրկված թվով վեց պարագրաֆներից, եզրակացությունից և օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

Հետազոտության արդյունքների փորձարկումը: Ատենախոսությունը պատրաստվել է ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնում: Ատենախոսության տեսական ընդհանրացումները, եզրահանգումներն ու առաջարկություններն արտացոլված են հեղինակի կողմից հրապարակված գիտական հոդվածներում, որոնք լույս են տեսել ամսագրերում և գիտական ժողովածուներում: Ատենախոսության մի շարք հիմնադրույթներ ներկայացվել են նաև ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետում կազմակերպված գիտաժողովներում:

Ատենախոսության կառուցվածքը: Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երկու գլխից, դրանցում ընդգրկված վեց պարագրաֆից, եզրակացությունից, օգտագործված նորմատիվ իրավական ակտերի և գրականության ցանկից:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հեղինակը հիմնավորում է հետազոտության թեմայի արդիականությունը, ներկայացնում է թեմայի մշակվածության աստիճանը, հետազոտության տեսական, նորմատիվ և փորձառական հիմքերը, մեթոդաբանությունը, հետազոտության օբյեկտը և առարկան, նպատակը և խնդիրները, գիտական նորույթը, ձևակերպում է պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, արտացոլում է հետազոտության տեսական ու գործնական նշանակությունը և հետազոտության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը՝ *«Պետական կառավարման ձև և ազգային անվտանգություն. փոխազդեցություն և փոխկապվածություն» վերտառությամբ,* բաղկացած է չորս պարագրաֆից:

Առաջին գլխի առաջին պարագրաֆում՝ *«ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքները, գործոնները և իրավական հիմքերը» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է

ազգային անվտանգության հասկացության պրոբլեմը, բացահայտում դրա բովանդակությունը, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության տեսական ուսումնասիրության արդյունքում քննարկում է ազգային անվտանգության ռազմավարության դերն այդ բնագավառում պետության քաղաքականության մշակման և իրագործման մեջ: Անդրադառնալով ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրավական հիմքերի հիմնախնդրին՝ հեղինակն առաջ է քաշում դրանք ոլորտը կարգավորող «Ազգային անվտանգության մասին» ՀՀ օրենքի ընդունմամբ լրացնելու անհրաժեշտության գաղափարը:

Առաջին գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«Պետական կառավարման ձևը որպես ազգային անվտանգության հիմնախնդիր» վերտառությամբ,* հեղինակն անդրադառնում է ազգային անվտանգության ապահովման հարցում պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների գիտակցման անհրաժեշտությանը՝ հիմնավորելով կառավարման մենիշխանական ձևերի վտանգավորության գաղափարը: Այս առումով հեղինակը, սակայն, գտնում է, որ հավասարապես անընդունելի են ինչպես պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների անտեսումը, այնպես էլ դրա բացարձակացումը պետության կառավարման ձևը քարացած չէ, այլ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ենթակա է փոփոխության և, ըստ էության, բնապատմական գործընթաց է: Իշխանության կազմակերպման կառուցվածքի պրոբլեմը հարաբերական խնդիր է, սակայն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմները բացարձակ են: Իշխանության կազմակերպվածքը կարող է լինել ամենատարբեր ձևերի: Սակայն գլխավորը դա չէ, այլ պետության առջև կանգնած կենսական կարևորությամբ խնդիրների, մասնավորապես՝ ազգային անվտանգության արդյունավետ լուծումն է, դրանով իսկ իշխանության գոյության իմաստի, նրա իրավահեղինակության ապահովումը:

Առաջին գլխի երրորդ պարագրաֆում՝ *«ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիան ազգային անվտանգության համատեքստում» վերտառությամբ,* հեղինակն ուսումնասիրում է ՀՀ պետական կառավարման ձևերի էվոլյուցիոն զարգացումն ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից՝ անդրադառնալով նաև այդ հարցում «Հայաստանի անկախության մասին» հռչակագրի դերին: Հայաստանի 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված կառավարման կիսանախագահական ձևի ուսումնասիրության արդյունքում հեղինակն առաջ է քաշում և հիմնավորում այդ մոդելի վտանգները ազգային անվտանգության ապահովման տեսնակյունից՝ հաշվի առնելով կառավարման այդ ձևի

մենիշխանական և «գերնախագահական» բնույթը՝ Հայաստանի 1995 թվականի Սահմանադրությունը բնութագրելով որպես «իշխանակենտրոն» Սահմանադրություն՝ «անձնակենտրոն» իշխանական համակարգով:

Առաջին գլխի չորրորդ պարագրաֆում՝ *«ՀՀ պետական կառավարման ձևի 2005 թվականի մոդելը և դրա վտանգները» վերտառությամբ,* հեղինակն արդեն ուսումասիրում է ՀՀ 2005 թվականի Սահմանադրությամբ ամրագրված կառավարման ձևի վտանգներն ազգային անվտանգության ապահովման տեսանկյունից՝ ընդգծելով, որ 2005 թվականի սահմանադրական բարեփոխումները, ըստ էության, հիմք չստեղծեցին պետության և հասարակության կայուն զարգացման համար. Հայաստանի Հանրապետության համար առանցքային խնդիր շարունակեց մնալ պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների սահմանադրական գործառույթների ու իրավասության ներդաշնակումը, դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը: Դա հիմնական ճանապարհն է հաղթահարելու համար սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումները, ստվերային երևույթները՝ պետաիշխանական լիազորություններն իրականացնելիս:

Երկրորդ գլուխը՝ *«Ազգային անվտանգության իրավական ապահովման հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում» վերտառությամբ,* բաղկացած է երկու պարագրաֆից:

Երկրորդ գլխի առաջին պարագրաֆում՝ *«Սահմանադրական բարեփոխումները՝ որպես կառավարման ձևի անվտանգության իրավական ապահովման արդյունավետության բարձրացման միջոց» վերտառությամբ,* հեղինակը, Սահմանադրական փոփոխությունների անհրաժեշտությունը գնահատելով պետական կառավարման ձևի անվտանգության իրավական ապահովման տեսանկյունից, ընդգծում է, որ սահմանադրական փոփոխությունների խնդիրը խիստ ժամանակավրեպ է այն պարագայում, եթե պետական կառավարման համակարգն ու հասարակության գործող մոդելն անթերի են և ապահովում են համալիր հասարակական գործընթացներում ներդաշնակություն, որի հիման վրա էլ՝ զարգացում՝ հանգելով, այն եզրակացությանը, որ ՀՀ պետական կառավարման ձևն իր գործառութավորմամբ առաջ էր բերել այնպիսի վտանգներ, որոնց չեզոքացումն առանց կառավարման ձևի սահմանադրաիրավական ամրագրումների փոփոխության հնարավոր չէր: Հեղինակն առանձին ուսումնասիրության առարկա է դարձնում նաև Հայաստանի Հանրապետության Նախագահին առընթեր սահմանադրական բարեփոխումների մասնագիտական հանձնաժողովի կողմից մշակված և Հայաստանի Հանրապետության Նախագահի կողմից հավանության

արժանացած Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում (այսուհետև՝ Հայեցակարգ) վեր հանված հիմնախնդիրները, ինչպես նաև դրանում տեղ գտած պահանջները, սկզբունքները և հայեցակարգային մոտեցումները:

Երկրորդ գլխի երկրորդ պարագրաֆում՝ *«ՀՀ պետական կառավարման ձևի վկանգների հաղթահարման իրավական լուծումները և միջոցները 2015 թվականի Սահմանադրությամբ» վերտառությամբ,* հեղինակը գնահատում է Հայաստանի Հանրապետության սահմանադրական բարեփոխումների հայեցակարգի կենսագործումը ՀՀ 2015 թվականի Սահմանադրությամբ: Հեղինակն արձանագրում է, որ ի թիվս այլնի նաև ընտրական համակարգի անկատարությամբ պայմանավորված իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկված սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2015 թվականի Սահմանադրությամբ ամրագրված կառավարման խորհրդարանական ձևը լիակատար գործառութավորման առաջին իսկ օրերին, հակառակ բոլոր սպասելիքների, 2018 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում բարձրացավ ժողովրդական դժգոհության աննախադեպ ալիք, որի արդյունքում խորհրդարանական կառավարման ձևի Հայաստանի առաջին վարչապետը իր պաշտոնավարման վեցերորդ օրը հրաժարական ներկայացրեց: Իհարկե, երկրում առաջացած ճգնաժամը մեծապես կապված էր ոչ թե կառավարման խորհրդարանական, այլև նախկին՝ կիսանախագահական ձևի թերություններով, սակայն անվիճելի է թվում այն փաստը, որ ընդհանրապես սահմանադրական բարեփոխումները, և, մասնավորապես, կառավարման ձևի փոփոխությունը դեռևս չեն ապահովել պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմի լուծումը, հետևապես հայկական պետականության բոլոր ջանքերը պետք է կենտրոնանան ընտրական համակարգի կատարելագործմանը և ընտրությունների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Ատենախոսության եզրակացությունում ի լրումն պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների, կատարվում են մի շարք ընդհանրացումներ ու առաջարկություններ, որոնցից առավել կարևորները հանգում են հետևյալին.

1. Ամբողջացնելով ազգային անվտանգության գիտական բնորոշումները, կարծում ենք, որ «ազգային անվտանգություն» ասելով պետք է հասկանալ արտաքին և ներքին վտանգներից անձի, հասարակության և պետության կենսական կարևորագույն շահերի պաշտպանվածության վիճակը: Ընդ որում՝ կենսական կարևորագույն շահերի տակ պետք է հասկանալ

պահանջմունքների համակցություն, որոնց բավարարումն ապահովում է անձի, հասարակության և պետության գոյությունը և առաջընթաց զարգացումը:

2. Անձի շահերը ներառում են սահմանադրական իրավունքների և ազատությունների իրացումը, անձնական անվտանգության ապահովումը, կյանքի որակի և մակարդակի բարձրացումը, անձի և քաղաքացու ֆիզիկական, հոգևոր և մտավոր զարգացումը: Հասարակության շահերը հանգում են ժողովրդավարության ամրապնդմանը, իրավական, սոցիալական պետության կայացմանը և հասարակական համերաշխության պահպանությանը: Ժամանակակից իրավական պետության շահերը ելնում են սահմանադրական կարգի, ինքնիշխանության և տարածքային ամբողջականության անձեռնմխելիության, քաղաքական, տնտեսական և սոցիալական կայունության ապահովման, օրինականության անվերապահ ամրապնդման և իրավակարգի պահպանման, փոխշահավետ միջազգային համագործակցության զարգացման պահանջներից:

3. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության համալիր ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այն առերևույթ զուրկ չէ նաև որոշակի թերություններից, որոնք, ըստ էության, հանգում են հետևյալին. ա) ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը որոշակի առումով խիստ հռչակագրային բնույթ ունի, այդ իսկ պատճառով դրա դրույթները շատ դեպքերում դժվար իրագործելի են, բ) ռազմավարությունը չի ապահովում ոլորտի հասկացությունների սահմանումը, այլ շատ դեպքերում սահմանափակվում է զուտ թվարկումներով: Այսպես, օրինակ, ռազմավարությունը թվարկում է ազգային անվտանգության հիմնարար արժեքները, ազգային անվտանգության դեմ ուղղված սպառնալիքները՝ չտալով այդ հասկացությունների սահմանումները, գ) ռազմավարությունը չի սահմանում ազգային անվտանգության ապահովման համակարգը, խնդրո առարկա ոլորտում պետական կառավարման մարմինների փոխադարձ կապը, հիմնական խնդիրները և գործառույթները: Նշված թերությունները, սակայն, չեն նսեմացնում ռազմավարության դերն ու նշանակությունը ազգային անվտանգության ապահովման ոլորտում պետական միասնական քաղաքականության մշակման և իրագործման հարցում:

4. Հասարակությունը քաղաքական ինստիտուտների միջոցով ձևավորում է պետությունը՝ տալով վերջինիս միաժամանակ երկու՝ հանրային շահերի, ներառյալ՝ ազգային անվտանգության ապահովման հետ կապված շահերի, կենսագործման հիմնական սուբյեկտի և միաժամանակ անվտանգության օբյեկտի հատկանիշներ: Ներքին ասպեկտով խոսքը պետք է գնա ազգային անվտանգության ապահովման հարցում պետության գործունեության մասին: Այստեղ պետությունը ձևավորում է անհրաժեշտ

մարմինների համակարգ, կազմակերպում և ուղղորդում է դրանց գործունեությունը համապատասխան խնդիրների լուծման նպատակով: Դրանով իսկ պետությունն իրականացնում է հենց իր նկատմամբ գերակա, անձի և հասարակության անվտանգության ապահովման գործառույթներ: Դրա հետ մեկտեղ լուծվում է նաև հենց իր՝ պետության անվտանգության ապահովման խնդիրը: Անվտանգության գործառույթների իրականացումը պետության կողմից պետք է բնորոշել որպես պետական անվտանգություն:

5. ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը հաստատվել է ՀՀ Նախագահի հրամանագրով, և նկատի ունենալով 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ Նախագահի կարգավիճակը, նրա առանձնահատուկ լիազորություններն արտաքին քաղաքականության, ազգային անվտանգության և պաշտպանության ոլորտներում և ՀՀ Սահմանադրության նորմերի անմիջական գործունեությունը՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրավական հիմքը նախևառաջ ՀՀ Սահմանադրությունն էր: Մինչդեռ 2015 թվականի փոփոխություններից ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված կարգավորումները առաջ են բերել մի նոր իրողություն, երբ մենք կարող ենք խոսել ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության իրավական հիմքերի մասնակի բացակայության մասին:

6. Քննարկելով պետական կառավարման ձևի հիմնախնդիրը ՀՀ ազգային անվտանգության համատեքստում՝ կարող ենք արձանագրել, որ ՀՀ ազգային անվտանգության ռազմավարությունը անտեսել է պետության բովանդակային կողմի (պետահիրավական ռեժիմի) վրա կառավարման ձևի ազդեցության արդյունքում ազգային անվտանգության սպառնալիքների առաջացման օբյեկտիվ հնարավորությունը և չի նախատեսել գործուն մեխանիզմներ դա կանխելու համար: Ռազմավարության հիմնարար արժեքների, դրանք ապահովող գործոնների և գործողությունների բովանդակային ուսումնասիրությունը և դրանց համադրումը պետահիրավական ռեժիմի քննարկված հատկանիշների հետ հիմք է տալիս եզրակացնելու, որ ռազմավարությունը սահմանափակվել է միայն ժողովրդավարական պետահիրավական ռեժիմի հաստատման համար անհրաժեշտ գործոնների ապահովմամբ՝ անտեսելով կառավարման ձևի հիմնախնդիրը: Կառավարման ձևի և պետության անվտանգության հարաբերակցության համատեքստում հարկ է նկատի ունենալ, որ կառավարման մենիշխանական, անձնիշխանական, նախագահական կամ կիսանախագահական համակարգի պայմաններում «փափուկ ուժի» գործոնը կարող է իշխանության բերել մի գործչի, որի կողմնորոշումը, այսպես ասած, հայամետ չէ: Արդի իրողությունների պայմաններում դա

հնարավոր է այն պատճառով, որ ընտրական գործընթացները զուգակցվում են մի շարք բացասական միտումներով: Այս պայմաններում պետության կառավարման համակարգի փոփոխությունը՝ անցումը կիսանախագահական մենիշխանությունից խորհրդարանական համակարգին, պետք է դիտվի որպես պետության պաշտպանության և անվտանգության, ազգային շահերի իրացման ապահովման միջոց:

7. ՀՀ ազգային անվտանգության համատեքստում պետական կառավարման ձևի հիմնախնդրի տեսական-իրավական ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ այս առնչությամբ անհրաժեշտ է միաժամանակ նկատի ունենալ, որ հավասարապես անընդունելի են ինչպես պետության կառավարման ձևով պայմանավորված վտանգների անտեսումը, այնպես էլ դրա բացարձակացումը: Կառավարման ձևի բացարձակացման օրինակ կարող է լինել, մասնավորապես, Ղազախստանի փորձը: Մասնավորապես «Ղազախստանի Հանրապետության ազգային անվտանգության մասին» ՂՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետը Ղազախստանի Հանրապետության սահմանադրական կարգի, այդ թվում՝ անկախության, ունիտարության և կառավարման նախագահական ձևի (ընդգծումը մերն է՝ Հ.Հ.), ամբողջականության, պետական սահմանի անձեռնմխելիությունը և պետության տարածքի անփոփոխելիությունը հռչակված են որպես Ղազախստանի Հանրապետության ազգային շահեր: Ակնհայտ է, որ կառավարման ձևով պայմանավորված վտանգների գիտակցումը ոչ թե այս կամ այն կառավարման ձևը որպես բացարձակ արժեք հռչակելն է, այլ կառավարման ընտրված ձևի՝ որոշակի պայմաններում վտանգներ առաջացնելու պոտենցիալի գիտակցումը և արդյունավետ իրավական կարգավորման միջոցով դրա չեզոքացումը: Պետության կառավարման ձևը քարացած չէ, այլ բազմաթիվ գործոնների ազդեցությամբ ենթակա է փոփոխության և, ըստ էության, բնապատմական գործընթաց է: Իշխանության կազմակերպման կառուցվածքի պրոբլեմը հարաբերական խնդիր է, սակայն պետության պաշտպանության ու անվտանգության ապահովման, ինչպես նաև պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմները բացարձակ են: Իշխանության կազմակերպվածքը կարող է լինել ամենատարբեր ձևերի: Սակայն գլխավորը դա չէ, այլ պետության առջև կանգնած կենսական կարևորությամբ խնդիրների, մասնավորապես՝ ազգային անվտանգության արդյունավետ լուծումն է, դրանով իսկ իշխանության գոյության իմաստի, նրա իրավահեղինակության ապահովումը:

8. 1995 թվականի Սահմանադրության ուժով Հայաստանում հաստատված կառավարման ձևը փաստացի վերացնում էր փոխադարձ

զսպումների և հակակշիռների մեխանիզմները և հարցականի տակ դնում իշխանությունների բաժանման սկզբունքը: Իշխանությունների բաժանման սկզբունքի էությունն իշխանությունների գործառնական և կառուցակարգային բաժանումն է, բայց գործադիր իշխանության իրականացումը վերապահելով կառավարությանը՝ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին տալիս էր այնպիսի լիազորություններ (վարչապետի ազատում, կառավարության նիստերի նախագահում, կառավարության որոշումների վավերացում, կառավարության կառուցվածքի և գործունեության կարգի որոշում և այլն), որոնք նրան հնարավորություն էին տալիս դառնալ կառավարության դեֆակտո ղեկավար: Նախագահ-խորհրդարան հարաբերություններում փոխադարձ զսպումների և հակակշիռների լիարժեք մեխանիզմների բացակայությունը 1995թ. Սահմանադրությունում հանգեցնում էր Հանրապետության Նախագահի բացարձակ գերակա դիրքին՝ օրենսդիր և գործադիր իշխանություններին նկատմամբ: Նման մոդելն առավել վտանգավոր էր մի երկրի համար, որը չուներ արմատավորված ժողովրդավարական ավանդույթներ, ուժեղ քաղաքացիական հասարակություն:

10. ՀՀ 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման կիսանախագահական ձևի սահմանադրաիրավական ամրագրման առանձնահատկություններն անխուսափելիորեն ստեղծել էին այն իրավիճակը, որ ամբողջ պետական համակարգը կառուցվում էր մեկ անձի՝ Հանրապետության Նախագահի շուրջ և կամքով: Ազգային անվտանգության տեսանկյունից այդպիսի իրավիճակը բացարձակապես անընդունելի է, քանի որ ազգային անվտանգության՝ որպես նպատակի տեսանկյունից անձ-հասարակություն-պետություն եռամիասնության մեջ գերական անձն է՝ իր կենսական կարևորության շահերով, մինչդեռ 1995 թվականի Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևը գործուն հիմքեր էր ստեղծել ներքին կազմակերպական իմունիտետից զուրկ պետական կառավարման համակարգը նեղ եսասիրական շահերին (անձնական, խմբակային և այլն) ծառայեցնելու և սեփական ինքնակամությանը ենթարկելու համար:

11. 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներն անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չստեղծեցին իրավունքի գերակայության սկզբունքի առավել հետևողական իրացման և այս հարցում Հայաստանի Հանրապետության ստանձնած միջազգային պարտավորությունների արդյունավետ կատարումը երաշխավորելու առումով: Սահմանադրության 3-րդ հոդվածի 3-րդ մասում ամրագրված դրույթը, համաձայն որի՝ «պետությունը սահմանափակված է մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներով և ազատություններով՝ որպես անմիջականորեն գործող

իրավունք», հիմնականում մնաց որպես բարի ցանկություն, քանի որ համակարգային առումով դրա իրացման անհրաժեշտ սահմանադրական նախադրյալներ չամրագրվեցին: 2005 թվականի սահմանադրական բարեփոխումներից հետո Հայաստանի Հանրապետության համար առանցքային խնդիր շարունակեց մնալ պետաիշխանական լիազորություններով օժտված մարմինների սահմանադրական գործառույթների ու իրավասության ներդաշնակումը, դրանց հայեցողության սահմանների հստակեցումը, իրավունքով իշխանության սահմանափակման իրական նախադրյալների ստեղծումը: Դա հիմնական ճանապարհն է հաղթահարելու համար սուբյեկտիվիզմի ու կամայականության դրսևորումները, ստվերային երևույթները՝ պետաիշխանական լիազորություններն իրականացնելիս:

12. 2005 թվականի փոփոխություններով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված պետական կառավարման ձևն իր գործառութավորմամբ ազգային անվտանգության տեսանկյունից առաջ էր բերել այնպիսի իրողություն, որում իշխանության թևերի համակարգային փոխգործակցության ընթացիկ համակարգը դարձել էր ոչ արդյունավետ, իսկ պետական կառավարման համակարգը չէր ապահովում հասարակության և պետության կայուն զարգացումը: Նշված վտանգների հաղթահարման ամենաօպտիմալ ուղին Սահմանադրական բարեփոխումներն էին, որոնց ներկայացվող պահանջները, սկզբունքները և հայեցակարգային մոտեցումներն ամրագրվեցին ՀՀ սահմանադրական բարեփոխումների հայեցակարգում: Հարկ է նկատել, որ Հայեցակարգը հիմնականում համապատասխանում էր քաղաքացիական հասարակության և ժողովրդավարության ժամանակակից ընկալումներին: Հայեցակարգով նաև ընդգծում էր ազգային անվտանգության ապահովման և բարեփոխումների առանցքային նպատակի միջև սերտ կապը, մասնավորապես, կատարելագործել «իրավունքների... երաշխավորման սահմանադրական կառուցակարգերը» (անհատի շահերի պաշտպանություն), «բարձրացնել հանրային կառավարման արդյունավետությունը» (հասարակության շահերի պաշտպանություն) և ապահովել «իշխանությունների լիարժեք հավասարակշռում» (պետության շահերի պաշտպանություն): Նշված նպատակների կենսագործումը հասարակական կյանքում ժամանակակից հայկական պետականության առանցքային գործառույթն է, քանի որ ձեռնարկված բարեփոխումների ձգձգումը կամ ձախողումը անմիջական սպառնալիքներ են ազգային անվտանգության համար:

13. 2017 թվականի խորհրդարանական ընտրությունների արդյունքների վերլուծությունը ցույց է տալիս, որ գրեթե բոլոր ընտրական տարածքներում

հիմնականում հաղթել են տարածքային այն թեկնածուները, ովքեր իրենց քարոզարշավը կառուցել են բացարձակապես ոչ քաղաքական հենքի վրա, իսկ մրցապայքարը հիմնականում ընթացել է որպես ռեսուրսների պայքար: Ընտրական գործընթացների նկատմամբ վստահության բարձրացման տեսանկյունից առավել ընդունելի կարող է համարվել Ազգային ժողովի ընտրությունների անցկացումը պարզ համամասնական ընտրակարգի միջոցով, ինչը միաժամանակ կբարձրացնի կուսակցությունների դերը և կնպաստի իրական բազմակուսակցականության կայացմանը. Ազգային ժողովի ընտրությունները չեն անձնավորվի:

14. Իշխանությունների լիարժեք հավասարակշռումն ապահովելու և հանրային կառավարման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով ձեռնարկված սահմանադրական բարեփոխումների արդյունքում 2015 թվականի Սահմանադրությամբ ամրագրված կառավարման խորհրդարանական ձևի լիակատար գործառութավորման առաջին իսկ օրերին, հակառակ բոլոր սպասելիքների, 2018 թվականի ապրիլ ամսին Հայաստանի Հանրապետությունում բարձրացավ ժողովրդական դժգոհության աննախադեպ ալիք, որի արդյունքում խորհրդարանական կառավարման ձևի Հայաստանի առաջին վարչապետը իր պաշտոնավարման վեցերորդ օրը հրաժարական ներկայացրեց: Իհարկե, երկրում առաջացած ճգնաժամը մեծապես կապված էր ոչ թե կառավարման խորհրդարանական, այլև նախկին՝ կիսանախագահական ձևի՝ սույն հետազոտության շրջանակներում քննարկված թերություններով, քանի որ ժողովրդական պայքարի ամենասկզբից բոլոր վանկարկումներն ուղղված էին 2008 թվականից Հայաստանի կիսանախագահական հանրապետության նախագահի պաշտոնը զբաղեցրած Սերժ Սարգսյանի՝ խորհրդարանական Հայաստանի վարչապետի թեկնածության դեմ: Սակայն անվիճելի է թվում այն փաստը, որ ընդհանրապես սահմանադրական բարեփոխումները, և, մասնավորապես, կառավարման ձևի փոփոխությունը դեռևս չեն ապահովել պետական իշխանության լեգիտիմության (իրավահեղինակության) պրոբլեմի լուծումը, հետևապես հայկական պետականության բոլոր ջանքերը պետք է կենտրոնանան ընտրական համակարգի կատարելագործմանը և ընտրությունների նկատմամբ հանրային վստահության բարձրացմանը:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Հայկ Հարությունյան, «Պետական կառավարման ձև. բովանդակային և կառուցվածքային բնութագիր», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների 2016թ. նստաշրջանի նյութերի ժողովածու / ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետ: Խմբ.՝ Գ. Ս. Ղազինյան. – Եր.: ԵՊՀ

հրատ., 2017, էջեր 23-36:

2. Հայկ Հարությունյան, «ՀՀ պետական կառավարման ձևի էվոլյուցիան ՀՀ սահմանադրական բարեփոխումների լույսի ներքո», ԵՊՀ իրավագիտության ֆակուլտետի ասպիրանտների և հայցորդների նստաշրջանի նյութերի ժողովածու, Երևան, 2018, թիվ 1 (1), էջեր 28-41:

3. Հայկ Հարությունյան, «ՀՀ ազգային անվտանգության ռազմավարության հիմնարար արժեքները, գործոնները և իրավական հիմքերը», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 3-4 (225-226), էջեր 10-17:

4. Հայկ Հարությունյան, «Պետական կառավարման ձևը որպես ազգային անվտանգության հիմնախնդիր», Օրինականություն, Երևան, 2018, թիվ 105, էջեր 34-40:

5. Հայկ Հարությունյան, «Սահմանադրական բարեփոխումները՝ որպես կառավարման ձևի անվտանգության իրավական ապահովման արդյունավետության բարձրացման միջոց», Դատական իշխանություն, Երևան, 2018, թիվ 5-6 (227-228), էջեր 28-33:

6. Հայկ Հարությունյան, «ՀՀ պետական կառավարման ձևի 2005 թվականի մոդելը և դրա վտանգները», Այլընտրանք, Երևան, 2018, թիվ 2 (ապրիլ-հունիս), էջեր 66-73:

АРУТЮНЯН АЙК АРСЕНОВИЧ

СОВРЕМЕННЫЕ ПРОБЛЕМЫ ФОРМЫ ПРАВЛЕНИЯ ГОСУДАРСТВА В КОНТЕКСТЕ НАЦИОНАЛЬНОЙ БЕЗОПАСНОСТИ

РЕЗЮМЕ

Диссертация посвящена изучению проблем формы правления государтсва в контексте национальной безопасности.

Интерес мирового сообщества к проблемам безопасности неуклонно растет, что связано с перманентными кризисными явлениями конца XX - начала XXI в., острота которых напрямую поставила вопрос о дальнейшей судьбе всего человечества. Динамичные изменения мировой геополитической ситуации, международное положение Армении и условия ее внутреннего развития негативные факторы социально-экономического развития страны, новые тенденции в обострении угроз интересам граждан, обществу и государству ставят перед всеми органами государственной власти актуальную задачу разработки эффективных мер, направленных на практическое разрешение ключевых проблем обеспечения национальной безопасности. Вышеупомянутое подчеркивает актуальность темы диссертации и значимость ее исследования.

Целью исследования является выявление, объективная оценка, комплексный анализ теоретических и практических проблем эффективного функционирования формы правления в контексте национальной безопасности, а также раскрытие роли формы правления в обеспечении национальной бесопасности, а также предъявление концептуальных заключений и научно-практических предложений направленных на его дальнейшее улучшение.

Исследование основано на множестве отечественных и зарубежных научных источников, а также на ряде отечественных и иностранных правовых актов, касающихся обеспечения национальной безопасности.

В рамках диссертации автор раскрывает понятие и сущность национальной безопасности, роль государства и формы правления, в частности, в обеспечении национальной безопасности. Автор оценивает потенциальную опасность той или иной формы правления в контексте национальной безопасности, подчеркивая, что обеспечение национальной безопасности является важнейшей межфункциональной задачей государства, затрагивающей все его функции. Анализ правовой политики Республики Армения в 1991-1995гг. показывает, что ни на законодательном,

ни на подзаонном уровнях не осуществлялось нормативно-правовое обеспечение национальной безопасности. На основе теоретико-правового анализа форм правления Республики Армения автор подчеркивает важность своевременного осознания потенциальных угроз формы правления и норматовного закрепления соответсвующих механизмов нейтрализации последних. Наконец, на основе результатов исследования автор дает теоретические и практические рекомендации для усовершенствования формы правления Республики Армения в контексте обеспечения национальной безопасности.

Научная новизна диссертации заключается в том, что впервые в отечественной юриспруденции в результате всестороннего и комплексного исследования выявлена роль формы правления в контексте обеспечения национальной безопасности и представлены новые идеи и рекомендации для усовершенствования эффективности функционирования государтсва. В диссертации особое значение придается изучению. Автор впервые в отечественной юридической литературе исследует весь комплекс проблем формы правления в контексте национальной безопасности в свете конституционных реформ Республики Армения 2015г., делая соответствующие заключения и выдвигая новые концептуальные подходы.

Научная новизна диссертации в первую очередь отражена в положениях, выносимых на защиту, в теоретических обобщениях и рекомендациях, сделанных в заключении диссертации.

Диссертация имеет не только научное, но и практическое значение, поскольку результаты исследования могут использоваться в качестве теоретической основы для дальнейших конституционных развитий, а также для правотворческой деятельности, направленной на составление нормативных правовых актов, регулирующих правоотношения, связанные с обеспечением национальной безопасности.

Диссертация подготовлена на кафедре теории и истории государтства и права ЕГУ. Теоретические обобщения, выводы и основные положения диссертации отражены в научных статьях автора, опубликованных в журналах и научных сборниках. Ряд тезисов диссертации также был представлен на конференциях, организованных на юридическом факультете ЕГУ.

HARUTYUNYAN HAYK

CURRENT PROBLEMS OF THE GOVERNMENT FORM IN THE CONTEXT OF NATIONAL SECURITY

SUMMARY

The dissertation is devoted to the study of the government form problems in the context of national security.

The interest of the world community in the security issues is growing steadily in connection with the permanent crisis phenomena of the end of the 20-th and the beginning of the 21-st century, the acuteness of which directly raised the question of the future destiny of all mankind.

Dynamic changes in the global geopolitical situation, international situation and the conditions of internal development of Armenia, the negative factors of the social-economic development of the country, new trends in the aggravation of threats to the interests of citizens, society and the state put the urgent task of developing effective measures aimed to the practical solution of key problems of national security before all government bodies. The abovementioned points out the relevance and the importance of the research of the dissertation subject.

The aim of the study is to identify, objectively evaluate, comprehensively analyze the theoretical and practical problems of the effective functioning of the government form in the context of national security as well as to disclose the role of government in ensuring national security and to present conceptual conclusions, scientific and practical proposals aimed to its further improvement.

The study is based on a variety of domestic and foreign scientific sources as well as a number of domestic and foreign legal acts related to national security.

Within the framework of the dissertation the author reveals the concept and essence of national security, the role of the state and the form of government, particularly in ensuring national security. The author assesses the potential danger of this or that form of government in the context of national security stressing that ensuring national security is the most important inter-functional issue of the state affecting all its functions. Analysis of the legal policy of the Republic of Armenia between 1991-1995 shows that neither the legislative nor the sub-legal national levels have implemented regulatory legal support for national security. Based on the theoretical legal analysis of the government form of the Republic of Armenia, the author emphasizes the importance of timely awareness of the potential threats of the government form and the normative consolidation of the appropriate mechanisms for neutralizing the latter. Finally,

based on the results of the research, the author provides theoretical and practical recommendations for the improvement of the RA government form in the context of ensuring national security.

The scientific novelty of the dissertation is that for the first time in the domestic jurisprudence, as a result of comprehensive and complete research, the role of the government form in the context of ensuring national security was revealed and new ideas and recommendations for the improvement of the efficiency of the state functioning were presented. The study is the exceptional value of the dissertation. The author, for the first time in the domestic legal literature, examines the entire complex of problems of the government form in the context of national security in the light of the constitutional reforms of the Republic of Armenia implemented in 2015, making appropriate conclusions and proposing new conceptual approaches.

The scientific novelty of the dissertation is primarily reflected in the provisions to be defended, in theoretical generalizations and recommendations made in the conclusion of the dissertation.

The dissertation has not only scientific but also practical significance, since the results of the research can be used as a theoretical basis for further constitutional developments as well as for law-making activities aimed at drafting legal acts regulating legal relations related to ensuring national security.

The dissertation is prepared at the Chair of Theory and History of State and Law of YSU. Theoretical generalizations, conclusions and main theses of the dissertation are reflected in the scientific articles of the author published in journals and scientific collections. A number of dissertation theses was also presented at conferences organized at the Faculty of Law of the YSU.